

—

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ
11-րդ դասարան

Միրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:

Հաջողություն՝ն և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1. Ի՞նչ շրջասույթներ գիտես Հովհաննես Թումանյանի մասին: Նշի՛ր հեղինակներին :
Գրի՛ր Չարենցի գնահատականներից որևէ մեկը:

Վերլուծի՛ր « Հայրենիքիս հետ » բանաստեղծությունը: (5 մ)

2. Ո՞վ է հայ գրականության Վարպետը. ո՞վ է նրան այդպես անվանել :

Ո՞ր բանաստեղծություններն են նախապատրաստել «Աբու – Լալա Մահարի» պոեմի երկունքը:

Ինչու՞ է Մահարին խոսում քարավանի հետ, ի՞նչ վեճ ունի բանաստեղծը աշխարհի հետ և ինչպե՞ս է այն ավարտվում: (5 մ)

3. Ո՞վ է «անանձնական սիրո» կրողը մեր գրականության մեջ:

Նշի՛ր այդ ստեղծագործությունները.

վերլուծի՛ր որևէ մեկը:

Գրի՛ր Չարենցի բնութագիրը: (5 մ)

4. Տերյանական աշխարհի նվագները քո հոգում:

Նշի՛ր 4-5 բանաստեղծություն , որտեղ Տերյանը խոսում է սիրո լեզվով:

Շարունակի՛ր (1-2 քառատող). Կախարդական մի շղթա երկնքում՝

..... (4 մ)

5. Ո՞վ է Եղիշե Չարենցի « Տաղարան» շարքի հերոսուհին: Ո՞ր հերոսուհու հետ ընդհանրություններ ունի: (1 մ)